


# *Տեղեկատու թիվ 10 (հոկտեմբեր 2022թ.)*
## *Newsletter N 10*

---

## Հայ դատի Կենտրոնական Խորհուրդ

### Հայ դատի ամփոփագիր, սեպտեմբեր 20-հոկտեմբերի 14 2022թ.

Visit our website

## Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

### Menendez Amendments Aim to Stop U.S. Military Aid to Azerbaijan; Block F-16 Sales to Turkey

Senate Foreign Relations Committee Chairman Bob Menendez (D-NJ) introduced two amendments to the Fiscal Year 2023 National Defense Authorization Act (NDAA) which would block U.S. military aid to Azerbaijan and stop the sale of F-16 fighter jets and upgrade kits to Turkey, measures strongly supported by the Armenian National Committee of America (ANCA).

“We want to thank Senator Menendez for his leadership in holding to account two reckless regional powers – Turkey and Azerbaijan –each representing clear and present dangers to Armenia and Artsakh,” said ANCA




Executive Director Aram Hamparian. “Enacted these measures into law will ensure that neither U.S. arms nor American tax dollars are sent to either of these regimes.”

Text Link

# Ռոբերտ Մենենդեսը ԱՄՆ Սենատում սկսել է «907-րդ բանաձևի» կիրարկումն ապահովող և Թուրքիային ամերիկյան ռազմական արտադրանքի վաճառքն արգելող օրենսդրական նախաձեռնություն




Հայ դատի Ամերիկայի հանձնախմբից տեղեկանում ենք, որ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեսը, ով օրեր առաջ, սենատոր Մարկո Ռուբիոյի հետ հանդես էր եկել Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակությունից զրկող և պատժամիջոցներ նախատեսող բանաձևի նախագծով, սեպտեմբերի 30-ին հանդես է եկել ևս երկու նախաձեռնությամբ:
Մենենդեսի նոր նախաձեռնությունը ենթադրում է համապատասխան կարգավորումներ 2023 թ. ֆիսկալ տարվա «Ազգային պաշտպանական արտոնությունների ակտում», որոնք ԱՄՆ նախագահին զրկում են «907-րդ բանաձևի» կիրարկումից հրաժարվելու հնարավորությունից և արգելափակում Թուրքիային F-16 կործանիչների ու դրանց արդիականացման համակարգերի վաճառքը: Ազատության աջակցության ակտի «907-րդ բանաձևի» կիրարկումից նախագահական հրաժարման օրենսդրական հնարավորության վերացումը ուղղակիորեն կզրկի Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակությունից:

Text Link

# Coalition to Protest Genocide Denial at Dr. Oz Pennsylvania Campaign Headquarters on October 12th




Pennsylvania’s Armenian and Greek communities have joined with the Rabbi Shmuley Boteach – ‘America’s Rabbi’ – to protest Pennsylvania Senate candidate Dr. Mehmet Oz’s ongoing refusal to properly characterize the Ottoman Turkish Government’s murder of over 2 million Armenians, Greeks, and other Christians from 1915-1923 as Genocide. A dual U.S.-Turkish citizen, who has served in Turkey’s military and has voted in elections in Turkey, Dr. Oz has close ties with Turkey’s autocratic President Recep Erdogan, and leading Turkish American groups that continue to rally against proper U.S. commemoration and condemnation of the Armenian Genocide.
The protest will take place on Wednesday, October 12th

from 4:00pm to 6:30pm at Dr. Oz’s Senate campaign headquarters, located at 2771 Philmont Ave, Huntingdon Valley, PA. Organizers include the Armenian National Committee of America national, Eastern US regional, and Pennsylvania local affiliates, Rabbi Shmuley Boteach, who leads the World Values Network, and the Hellenic American Leadership Council (HALC).

Text Link

## Armenian, Jewish, Greek, and Kurdish Americans to Dr. Oz: No Genocide Deniers in Congress




A coalition of Armenian, Jewish, Greek, and Kurdish Americans, gathered at Pennsylvania Senate candidate Dr. Oz’s headquarters to protest his refusal to recognize the Armenian Genocide and to call upon him to end his complicity in Turkey’s international campaign of denial. Organizers of the protest included the Armenian National Committee of America national, Eastern US regional, and Pennsylvania local affiliates, Rabbi Shmuley Boteach – “America’s Rabbi,” – who leads the World Values Network, and the Hellenic American Leadership Council (HALC).
“We are here today because as American citizens and descendants of the survivors of genocide, we refuse to allow a candidate to drag the U.S. Senate back into the days of denial,” stated ANC of Pennsylvania Co-Chair Lorig Baronian. “Denial is the final stage of all genocides – and also, sadly, the first stage of the next genocide – because it enables the perpetrators to escape culpability. This is what allows them to recur, and unfortunately, is evident today as we see similar atrocities being committed with impunity against the Kurdish minority of Turkey, to the Armenians of Artsakh.”

Text Link

## Ամերիկայի հայկական, հրեական, հունական և քրդական համայնքների ներկայացուցիչները Մեհմեդ Օզի նախընտրական գրասենյակի առջև անցկացրել են բողոքի ցույց



Հայկական, հրեական, հունական և քրդական կազմակերպությունների համայնքային կոալիցիան հոկտեմբերի 12-ին բողոքի ցույց է անցկացրել Փենսիլվանիայում առաջադրված սենատորի թեկնածու, ազգությամբ թուրք նախընտրական կենտրոնական գրասենյակի առջև։ Թուրքիայի և ԱՄՆ քաղաքացի Մեհմեդ Օզին նշանավոր է Հայոց եւ Հունաց ցեղասպանությունների մերժմամբ, Թուրքիայի նախագահ Էրդողանի հետ անձնական ջերմ հարբերություններով, թուրքական իշխանությունների հետ բիզնես-կապերով։ Բողոքի ցույցի կազմակերպիչներն էին Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, Հայ դատի ԱՄՆ Արևելյան ափի հանձնախումբը, Փենսիլվանիայի Հայ դատի տեղական հանձնախումբը, Ամերիկա-հունական առաջնորդության խորհուրդը և ռաբի Շմուլեյ Բոթիչը, ով ղեկավարում է «Համաշխարհային արժեքների ցանց» կազմակերպությունը։
Հայ դատի Ամերիկայի հանձնախումբն արդեն տևական ժամանակ պայքարում է Մեհմեդ Օզի ընտրարշավը ձախողելու ուղղությամբ, ի թիվս այլնի նաև մատնանշելով, որ նրա ընտրությունը վտանգ է ներկայացնում նաև ԱՄՆ ազգային անվտանգության համար։

Text Link

# ANCA Endorses Pro-Armenia/Artsakh Senate and House Leaders




A select, bipartisan group of 88 U.S. Congressional candidates from 22 states have earned Armenian National Committee of America (ANCA) endorsements for their sustained pro-Armenia and Artsakh records of support on ANCA-backed initiatives during the 117th Congress (2021-22).

Heading up the ANCA's Senate endorsement list are Florida Republican Senator Marco Rubio and California Democrat Alex Padilla, each of whom has worked closely with Senate Foreign Relations Committee Chair Robert Menendez (D-NJ) to stop U.S. military assistance to Azerbaijan. Sen. Rubio joined Sen. Menendez in introducing S.Res.797, which condemns Azerbaijan's September attacks on sovereign Armenian territory, calls for increased aid to Artsakh, and demands Section 907 restrictions on U.S. aid to Azerbaijan's Aliyev regime. Sen. Padilla is leading an amendment to the FY23 National Defense Authorization Act which calls for an investigation into the use of U.S. technology in attacks against Armenia and Artsakh. Senate Foreign Relations Committee and Appropriations Committee member Chris Van Hollen (D-MD) continues to have earned ANCA support for advancing multiple amendments to block the sale of F-16s and F-16 upgrade kits to Turkey.

Text Link

# ANC Pennsylvania Protests Dr. Oz Genocide Denial at Harrisburg Debate




Armenian Americans again called on Pennsylvania Senate candidate Dr. Mehmet Oz to end his complicity in Turkey's Armenian Genocide denial, at a protest organized by the ANC of Pennsylvania (ANC-PA), timed with the televised debate between Dr. Oz and his opponent, Pennsylvania Lieutenant Governor John Fetterman.

Protesters shared their concerns with local, national, and international media in the run-up to the debate, noting Dr. Oz's refusal to properly characterize the Armenian Genocide, his close ties with Turkey's dictator Recep Erdogan, and concerns that a Dr. Oz victory would open the door to foreign influence in the U.S. Senate.

ANCA Executive Director Aram Hamparian told the Philadelphia Inquirer's Julia Terruso that "we're worried that the unanimity that took us 50-60 years to secure will be rolled back." Hamparian was referencing the 2019 unanimous U.S. Senate vote recognizing the Armenian Genocide. The ANC-PA protest was also covered by MSNBC and the local York Dispatch, in addition to British, Japanese, and Korean television.

Text Link

# Ամերիկահայերը Սենատի անդամի թեկնածու Մեհմեթ Օզից պահանջել են դադարեցնել Հայոց ցեղասպանության ժխտումը

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայկական համայնքի ներկայացուցիչները բողոքի ակցիա են անցկացրել՝ Փենսիլվանիայից Սենատի

անդամի թեկնածու, ազգությամբ թուրք Մեհմեթ Օզից պահանջելով դադարեցնել Հայոց ցեղասպանության ժխտումը: Ինչպես հայտնում է ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը, բողոքի ակցիան անցկացվել է հեռուստաբանավեճին զուգահեռ, որին մասնակցել են Մեհմեթ Օզը և նրա մրցակից, Փենսիլվանիայի փոխնահանգապետ Ջոն Ֆեթերմանը: Ակցիայի մասնակիցները տեղական և միջազգային լրատվամիջոցների հետ կիսվել են իրենց մտահոգություններով՝ մատնանշելով Մեհմեթ Օզի կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու փաստը, նրա սերտ կապերը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ: Ցուցարարները մտահոգություն են հայտնել, որ ընտրություններում Օզի հաղթանակը կարող է դուռ բացել ԱՄՆ-ում օտարերկրյա ազդեցության համար:




Text Link

## Հայ դատի Կանադայի հանձնախումբ

# ՀՅԴ Հայ Դատի առաքելութեան համար Գանատայի Արեւմտեան շրջանին մէջ գոյացաւ 120 հազար տոլար



Հոկտեմբեր 1-ին, Վանգուվըրի Հայ կեդրոնին մէջ կայացած նուիրահաւաքի ընթացքին, Հայ Դատի առաքելութեան հաւատարիմ գանատահայեր 120 հազար տոլար հանգանակեցին ի նպաստ Արցախի եւ Հայաստանի: ՀՅԴ Վանգուվըրի «Սիմոն Վրացեան» կոմիտէի եւ Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպած միջոցառման պատգամաբերն էր ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան, որ փոխանցեց օրուան պատգամն ու Հայ Դատի քաղաքական ծրագրային ուղեծիրը: Ան շեշտեց, որ դառնաղէտ հայոց ցեղասպանութենէն ետք, հայութիւնը կարողութիւնը ունեցած է վերընձիւղելու իր գոյութիւնը եւ այժմ՝ համազգային մատահրաւէրն է վերականգնելու այսօրուան իրավիճակն ու հեռացնելու գործող ապիկար իշխանութիւնը:

Text Link

# Ճան Հորկան Ճասթին Թրուտոյի ուշադրութեան կը յանձնէ Հայաստանի դէմ ուղղուած Ատրպէյճանական յարձակողապաշտ արարքները



Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտոյին ուղղուած նամակով մը, Պրիթիշ Գոլոմպիա նահանգի վարչապետ Ճան Հորկանը Օթթաուայի իշխանութեանց ուշադրութեան յանձնած է Հայաստանի դէմ ատրպէյճանական ռազմական յարձակողապաշտ արարքներու պարագան եւ փոխանցած Գանատայի հայ համայնքի ոգզոհութիւնը Օթթաուայի դաշնակցային կառավարութեան անբաւարար արձագանգին

առնչութեամբ: Այս մասին կը հաղորդէ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը:
Նշենք, որ Հոկտեմբեր 3-ին, Գանատայի Արեւմտեան շրջանի Հայ դատի յանձնախումբի պատուիրակութիւնը յատուկ հանդիպում ունեցած էր Պրիթիշ Գոլըմպիայի վարչապետ Ճան Հորկանի հետ, որ խոստացած էր Արցախի եւ Հայաստանի դէմ շարունակուող ատրպէյճանական յարձակողապաշտ վարքագծին հարցը բարձրացնել Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտոյի մօտ: Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան անդամներ Յակոբ Տէր Յակոբեան եւ Վահէ Անտոնեան վարչապետ Հորկանին զեկուցած էին նաեւ սեպտեմբերին Ատրպէյճանի զինուած ուժերու կողմէ հայ ռազմագերիներու դէմ գործադրուած մահապատիժի ու այլ ռազմական յանցագործութիւններու պարագան, միաժամանակ շեշտելով Արցախի ինքնորոշման և անկախութեան անհրաժեշտութիւնը:

Text Link

## «Յանուն Հայրենիքին ու Հայ Դատին». Հայ Դատի Առաքելութեան Համար Մոնթրէալի Մէջ Գոյացաւ 255 Հազար Տոլար



Հոկտեմբեր 26-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնին մէջ կայացած «Յանուն Հայրենիքին ու Հայ Դատին» խորագիրով նուիրահաւաքի ընթացքին, Հայ Դատի աշխատանքներուն համար հանգանակուեցաւ 255 հազար տոլար: ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի կազմակերպած ընդունելութեան գլխաւոր պատգամաբերն էր ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը, որ փոխանցեց օրուան պատգամն ու Հայ Դատի քաղաքական ծրագրային ուղեծիրը:
Օրուան գլխաւոր պատգամաբեր, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան համապարփակ զեկոյցով ներկայացուց Արցախեան պատերազմէն ետք, Հ.Յ.Դաշնակցութեան դիմագրաւած մարտահրաւէրներն ու քաղաքական դիրքորոշումները, ինչպէս նաեւ կուսակցութեան իրագործումները Հայ Դատի ոլորտէն ներս: Ան յստակ գիծերով բացատրեց Հայ Դատի առաքելութիւնը, որ կը նպատակադրէ Արցախի հիմնահարցի բարեյաջող լուծումն ու արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի ապահովումը, Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման հարցը, աշխարհասփիւռ հայ համայնքներուն իրաւունքներու պաշտպանութիւնը, թուրք-ատրպէյճանական պատմագիտական նենգափոխութիւններու դէմ արշաւը եւ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդումն ու համադրումը: Իր խօսքը ուղղելով հանգանակութեան աջակիցներուն, նուիրատուներուն եւ կուսակցութեան համակիրներուն, ընկ. Տէր Խաչատուրեան ըսաւ. «Դուք է, որ ամուր կը պահէք մեր ողնայարը, պինդ կը պահէք մեր գործունէութիւնը եւ Հայ Դատի մեր աշխատանքը կը պահէք նպատակայալաց»:

Text Link

In a letter addressed to Prime Minister Justin Trudeau, BC Premier, the Hon. John Horgan called out Azerbaijan's latest military aggression against Armenia and relayed our community's dissatisfaction with the federal government's insufficient response.
At a recent meeting, ANCC-Western Region representatives (pictured above) briefed Premier Horgan on the recent, September 2022 attack and aggression by Azerbaijan on the territory of Armenia and the ongoing war crimes and execution and mutilation of POWs, committed by Azeri forces, their threats of ethnic cleansing and genocide against the Republic of Artsakh and the need for Artsakh's self determination and independence.
We thank Premier Horgan for his ongoing support to the Armenian community and look forward to continuing our cooperation as we represent the interests of the Armenian community in BC and across Canada.



BRITISH COLUMBIA

October 7, 2022

The Right Honourable Justin Trudeau, PC, MP
Prime Minister of Canada
House of Commons
Ottawa, ON K1A 0A6

Dear Prime Minister,

I am writing to you regarding the recent attacks by Azerbaijan's military forces against the Republic of Armenia in its border region, which resulted in significant casualties and shelling that targeted peaceful civilians.

In recent meetings with Armenian-Canadian community leaders in British Columbia, they expressed their disappointment with the federal government's official response to these events. They recognize that Canada has made solid commitments in recent years to support Armenia's democratic development, peace and prosperity. However, Armenian-Canadian community leaders want to ensure that Canada will stand by Armenia during this difficult period, especially given the tenuous nature of the current ceasefire.

Apart from relaying to you the concerns expressed to me by community leaders, I wish to lend my support and that of British Columbians to all efforts toward sustainable peace in the region. I hope the Government of Canada will do all it can in support of this goal and I look forward to receiving your response.

Sincerely,

John J. Horgan
John Horgan
Premier

cc: The Honourable Mélanie Joly, Minister of Foreign Affairs

Office of the Premier | Web Site: www.gov.bc.ca | Mailing Address: PO Box 9041 Stn Prov Govt Victoria BC V8W 9E1 | Location: Parliament Buildings Victoria

## Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ




## On 18th of October 2022 All Party Parliamentary Group for Armenia held an AGM and elected the following officers:

### ANC Chairperson Annette Moskofian will continue her role as Group Secretariat

## Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

# Hugh McDermott MP Calls For Australian Ambassador to Turkey to be Recalled and Disciplined




New South Wales State Member for Prospect, Dr Hugh McDermott has called for Australia's Ambassador to Turkey, Miles Armitage to be "recalled" and "disciplined" following Defence Attaché, Captain Ben Esler's visit to the currently occupied Republic of Artsakh city of Shushi in August, hosted by Azerbaijan's autocratic leader Dictator Ilham Aliyev, reported the Armenian National Committee of Australia (ANC-AU).
The propaganda event masquerading as a "reconstruction conference", which was recently applauded and celebrated by Ambassador Armitage, sparked immediate outcry from Australians of Armenian descent and was communicated by a letter from the peak public affairs body of the Armenian-Australian community demanding answers from the Department of Foreign Affairs and Trade (DFAT).
McDermott, who visited Shushi and other parts of the Republic of Artsakh as part of the first Federal-led delegation in 2019, raised this issue whilst condemning Azerbaijan's latest assault against the sovereign borders of the Republic of Armenia.

Text Link

## Հայ դատի Լիբանանի հանձնախումբ

# ՀՅԴ Լիբանանի Հայ Դատի Մարմինը Կոչ Ուղղեց Դատապարտելու Հայ Գերիներու Գնդակահարումը Եւ Հաշուետուութեան Ենթարկելու Պատասխանատուները



ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը երէկ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Եոաննա Վրոնեցքային յղեց նամակ մը, որուն մէջ անոր ուշադրութեան հրաւիրեց 2 հոկտեմբերին ազրպէյճանական թելեկրամեան ալիքներու կողմէ շրջանառութեան մէջ դրուած հայ պատերազմական գերիներու գնդակահարութեան տեսանիւթը:
Հայ դատի մարմինը նշեց, որ Հայաստանի Հանրապետութեան գերիշխան տարածքին վրայ Ազրպէյճանի՝ 13 սեպտեմբերին շղթայազերծած չհրահրուած յարձակումի ընթացքին 4 հայ կին զինուորներու դէմ պատերազմական ոճիր գործուած ու տեսագրուած էր:
ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը ընդգծեց, որ այդ արարքները Ժընեւի ուխտի յստակ

խախտում են, եւ ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղարին, միջազգային ընտանիքին եւ մարդկային իրաւանց միջազգային կազմակերպութիւններուն կոչ ուղղեց՝ «յստակ ու աներկբայելի կերպով դատապարտելու այդ քստմնելի եւ բարբարոսական արարքները, որոնք անմիջական արդիւնքն են ազրպէյճանական իշխանութիւններուն հակահայ քաղաքականութեան ու հռետորաբանութեան, եւ հաշուետուութեան ենթարկելու այդ արարքներու պատասխանատուները»:

Text Link

## Հայ դատի Հարավային Ամերիկանի հանձնախումբ

# Ուրուգվայի Սենատորների պալատը հոկտեմբերի 18-ին հայտարարությամբ դատապարտել է ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածք Ադրբեջանի ներխուժումը



Ուրուգվայի Հայ Դատի հանձնաժողովի աշխատանքների և անելիքների մասին Yerkir.am-ը զրուցել է Ուրուգվայի Հայ Դատի հանձնախմբի անդամ, Հարավային Ամերիկայի կենտրոնական կոմիտեի անդամ Արփի Հօճաճանյանի հետ:

«Մենք ակտիվ գործունեություն միշտ ենք տանում, բայց սեպտեմբերի 13-ին, երբ Ադրբեջանի զինված ուժերը ներխուժեցին Հայաստանի ինքնիշխան տարածք, մեր բոլոր ուժերն ու աշխատանքները կենտրոնացրեցինք, որպեսզի հնարավորինս շատ դատապարտման հայտարարություններով հանդես գան այդ դեպքի վերաբերյալ: Մենք սեպտեմբերի 13-ին Ուրուգվայի «Արցախ» ֆորումի կողմից հայտարարություն հրապարակեցինք, որտեղ դատապարտեցինք պատահածը, հաջորդ օրն արդեն Ուրուգվայի Հայ Դատի հանձնախումբը հայտարարություն տարածեց, որտեղ Ուրուգվայի խորհրդարանին և կառավարությանը խնդրեցինք, որպեսզի հստակ կերպով դատապարտեն ադրբեջանական զորքերի այս ապօրինի հարձակումը: Իսկ ինչ վերաբերվում է Սենատների պալատի հայտարարությանը՝ այո մենք դրա համար շաբաթներ շարունակ աշխատել ենք: Մեկ առ մեկ սենատորների հետ զրուցելով, բացատրելով և խստորեն դատապարտելով եղածը և այս հայտարարության կարևորությունը, որովհետև մեկ շաբաթ առաջ Ներկայացուցիչների պալատը քվեարկեց հայտարարություն, բայց մենք գոհ չմնացինք դրանից և մեր բոլոր ուժերը կենտրոնացրեցինք Սենատի վրա, որը հաջողվեց:

Text Link

Հայ դատի Կենտրոնական խորհուրդ | +374-10-52-19-66 | www.ancnews.info